# ԲՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բնապահպանության նախարարության էլեկտրոնային պարբերաթերթ 5/2017



## Արարատյան արտեզյան ավազանի կենսական հոգսերը

Փետրվարի 15-ին ՀՀ բնապահպանության նախարարությունում նախարար Արծվիկ Մինասյանի նախագահությամբ կայացել է ՀՀ վարչապետի որոշմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և ստորերկրյա ջրերի օգտագործումը նորմավորելու նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի հերթական նիստը: Քննարկման է ներկայացվել «Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցառումների ծրագիրը»: Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի, մեկամսյա ժամկետում միջգերատեսչական աշխատանքային խումբը ամենշաբաթյա նիստերով և աշխատանքային քննարկումների ու հանդիպումների միջոցով համապատասխան ծրագրի նախագիծ է մշակել, որի վերջնական տարբերակը պետք է ներկայացվի վարչապետ Կարեն Կարապետյանին: Ծրագրի շուրջ ձևավորվել է ընդհանուր մոտեցում, համաձայն որի, վերջին տասնամյակում ջրօգտագործման պայմաններն Արարատյան արտեզյան ավազանում խիստ փոփոխվել են ձկնաբուծության ոլորտի զարգացման հետևանքով: Հաշվի առնելով այդ հանգամանքը, առաջարկվում է 2017-18 թթ. Արարատյան դաշտում ստորերկրյա ջրառը հորատանցքերով սահմանափակել տարեկան մինչև «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքով ամրագրված 1.1 մլրդ մետր խորանարդ: Այս արդյունքին հասնելու համար կարևորվում են մի շարք միջոցառումներ, որոնցից առաջնային են ստորերկրյա ջրառի ծավալների կարգավորումը՝ առանց ջրօգտագործման թույլտվությունների կամ դրանցով տրամադրած ջրի ծավալները գերազանցող ձկնային տնտեսություններում, չշահագործվող հորատանցքերում ազատ հոսքի վերացում, ինչպես նաև ոռոգման նպատակով ՋՕԸ-ների կողմից կատարվող ստորերկրյա ջրառի ծավալների կրճատում: Ծավալված քննարկման և նոր առաջարկների առկայությամբ պայմանավորված՝ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը տվել է հանձնարարական՝ երկօրյա ժամկետում ծրագրի վերաբերյալ առաջարկների վերջնական ներկայացման համար:

# Կարեւոր կամ սկզբունքային հարցերում մենք կլինենք միասին



Փետրվարի 15-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ նախագահ Կարեն Զադոյանի և «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նախարարին ներկայացվել է «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը, որի թիրախն է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների (ՔՀԿ) զարգացումը՝ քաղաքականությունների ձևավորմանը, մոնիթորինգին ներգրավելու միջոցով: Ծրագիրը նպատակ ունի կառավարության և ՔՀԿ-ի միջև ձևավորել արդյունավետ երկխոսություն, ինչը հնարավորություն կտա վեր հանել առկա խնդիրները, ստեղծել հարթակ դրանց լուծման ուղիները նախանշելու, հանրային քաղաքականության նոր ծրագրեր մշակելու ուղղությամբ: Ընտրված 9 թիրախային ոլորտներից երեքում ծրագիրը հաստատվել է, ներկայում պատասխանատուները այն ներկայացնում են տարբեր գերատեսչություններում գործընկերային՝ հարաբերությունների կառուցման և համատեղ աշխատանք նախանշելու համար: Նախարար Արծվիկ Մինասյանը ողջունել է նախաձեռնությունը և համագործակցության պատրաստակամություն հայտնել: «Պատրաստակամ ենք համագործակցելու բոլոր այն նախանշված ուղղություններով, որոնք ծրագրի շրջանակներում կարևոր կամ սկզբունքային են: Բնապահպանության նախարարությունը մի շարք գործողություններ արդեն իսկ ձեռնարկել է թափանցիկության բարձրացման, որոշումների ընդունման գործում հանրային սեկտորի առավել լայն կիրառման ուղղությամբ, ավելին, մեր գործողություններում փորձում ենք հաշվետվողականության հետ միասին ապահովել արդյունքների հասանելիության և աշխատանքների արդյունավետության բարձրացման առաջարկությունների ներկայացման հանրային մեխանիզմների ներդնում»,-իր խոսքում, մասնավորապես, նշել է Արծվիկ Մինասյանը: Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի մեկնարկը տրվել է 2016 թվականի դեկտեմբերի 15-ին: Ծրագրի տևողությունը 34 ամիս է:

# Հաղթող ճանաչվեց «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը



ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը մասնակցել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կազմակերպած 2016 թվականի երիտասարդական մրցանակաբաշխության եզրափակիչ փուլին և մրցանակակիրների պարգևատրման հանդիսավոր արարողությանը: Մրցանակաբաշխության նպատակն է խրախուսել տարվա ընթացքում նշանակալի հաջողությունների հասած երիտասարդներին, երիտասարդական խմբերին և երիտասարդական հասարակական կազմակերպություններին, արժևորել նրանց ձեռքբերումները:

Տեղում կազմակերպված բաց քվեարկության արդյունքում «Երիտասարդ բնապահպան» անվանակարգում հաղթող է ճանաչվել «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը՝ իրականացրած բազմաթիվ բնապահպանական ծրագրերի, մասնավորապես Հայաստանում առաջին էկոտուրիզմի փառատոնի կազմակերպման համար:

Հանձնելով մրցանակը հաղթող հասարակական կազմակերպությանը՝ Խաչիկ Հակոբյանը ողջունել է միջոցառման կազմկերպումը և կարևորել հասարակական կազմակերպությունների դերը բնապահպանական խնդիրների լուծման և, ընդհանրապես, պետականաշինության գործընթացում: Փոխնախարարը նաև բարձր է գնահատել ՀՀ բնապահպանության նախարարության և հասարակական կազմակերպությունների՝ մասնավորապես «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» ՀԿ-ի հետ համագործակցությունը:

# Դրական տեղաշարժ եւ տեսանելի թերություններ անտառկառավարման տեղեկատվական համակարգում

Փետրվարի 10-ին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄԸՀ) գրասենյակում Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում (ԿԻԿ) ծրագրի հետ համատեղ ներկայացվեցին Ազգային անտառկառավարման տեղեկատվական համահարգի «ՄԱԿՏՀ», Աշխարհագրական տեղեկատվական համակարգի «ԱՏՀ» և հեռահար զոնդավորման «ՀԶ» կիրառման վերաբերյալ տեխնիկական և կազմակերպչական գնահատման արդյունքները:

Ծրագրի նպատակն էր ներկայացնել տեխնիկական և կազմակերպչական գնահատման ընթացքն ու արդյունքները:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խ.Հակոբյանը, որը շնորհակալություն հայտնեց Գերմանական Համագործակցության Ընկերությանը (ԳՀԸ)՝ երկար տարիների համագործակցության և վստահության համար:



Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը (ԿԻԿ) ծրագրի թիմի ղեկավար Քարսթեն Շուլցը, ով շնորհակալություն հայտնեց ծրագրի տեխնիկական և կազմակերպչական գնահատումը իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի անդամներին և այլ շահառու կազմակերպություններին՝ իրականացված աշխատանքների համար: Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության Աշխարհատեղեկատվական համակարգի մասնագետ Արամ Գևորգյանը ներկայացրեց զեկույց՝ տեխնիկական և կազմակերպչական գնահատման ընթացքի ու մեթոդների վերաբերյալ: Ներկայացվեցին մի քանի գործընթացներ, որոնք դրական տեղաշարժ են արձանագրել ծրագրի իրականացման գործում:

Խոսվեց նաև անտառկառավարման տեղեկատվական համակարգի ստեղծման թերությունների, բացթողումների, խոչընդոտների և դրանց հնարավոր լուծումների մասին: Մասնակիցների կողմից եղան բազմաթիվ առաջարկություններ՝ համատեղ իրականացվող ծրագրերի կազմակերպչական և տեխնիկական գործոնների բարելավման ուղղությամբ:

# Փականային ռեժիմի բերած տպավորիչ օգուտները



Շարունակվում են Արարատյան դաշտում խորքային հորերի փականային ռեժիմի բերման, կոնսերվացման և լուծարման աշխատանքները: ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության իրականացված միջոցառումների շնորհիվ՝ մասնավորապես ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքի 4 խորքային հորի փականային ռեժիմի բերման արդյունքում խնայվել է մոտ 130.0լ/վրկ ջուր:

# Օզոնային շերտի պահպանությունը գլոբալ մտահոգություն



Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիան և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրությունը 1999 թ. ապրիլի 28-ին, Արձանագրության Լոնդոնյան եւ Կոպենհագենյան ուղղումները` 2003 թ. հոկտեմբերին` Մոնրեալյան և Պեկինյան ուղղումները` 2008 թ. սեպտեմբերին:

Յուրաքանչյուր երկիր, վավերացնելով «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիան և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրությունը, պարտավորվում է մշակել օզոնային շերտը քայքայող նյութերի փոխարինման համար ծրագիր, Կոնվենցիայի քարտուղարություն ներկայացնել փոխարինման ժամանակացույցը և քայլեր ձեռնարկել նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ: Այդ ժամանակից ի վեր հավաքագրվում, վերլուծվում և սահմանված կարգով Օզոնի քարտուղարություն են ներկայացվում օզոնային շերտը քայքայող նյութերի գործածման վերաբերյալ տվյալներ: Չի իրականացվում առևտուր Կողմ չհանդիսացող երկրների հետ:

2006 թ. ընդունվեց «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» ՀՀ օրենքը, իսկ 2007 թ.` օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը: Այսուհետ` Հայաստանում ստեղծվեց Օզոնաքայքայիչ նյութերի գործածման հսկողության համակարգ: Այդ համակարգի մաս է կազմում ՀՀ բնապահպանության նախարարության թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալությունը, որը շարունակաբար իրականացնում է ներկրված օզոնաքայքայիչ նյութերի հաշվառում և տալիս գրավոր պարզաբանումներ դրանց ԵՏՄ մաքսային տարածք ներմուծելու համար: Միայն այս շաբաթ գործակալության կողմից տրվել է 8 այդպիսի պարզաբանում:

# Արժեքավոր փորձի փոխանակում էկոտուրիզմի ոլորտում



• *Ընդլայնվում է հայ-ճապոնական համագործակցությունը*

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը (JICA) Հայաստանում կազմակերպել էր 2-րդ սեմինարը, որտեղ քննարկվել են Հայաստանում տուրիզմի և էկոտուրիզմի զարգացման հիմնախնդիրները, կիսվել Ճապոնիայի տուրզմի զարգացման փորձով: Զեկույցներով հանդես են եկել Զբոսաշրջության Պետական կոմիտեի ղեկավար Զարմինե Զեյթունցյանը, ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության Էկոտուրիզմի զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Սարգսյանը: Նրանք ներկայացրել են ոլորտում առկա հիմնախնդիրները, ներուժը,զարգացման ուղիները, անդրադառնալով ԲՀՊՏ-ում կազմակերպվող էկոտուրիզմի առանձնահատկություններին և ձևերին: Քննարկվեց ՀՀ-ում տուրիզմի և հատկապես էկոտուրիզմի զարգացման նախապայմանները, վեր հանվեցին համակարգում առկա խնդիրներն ու զարգացման ուղիները: Արդյունքում ուրվագծվել է տուրիզմի ոլորտում հայ-ճապոնական համագործակցության ընդլայնման հեռանկարը և սերտ համագործակցել ՀՀ բնապահպանության նախարարության, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության և տուրիզմի պետական կոմիտեի միջև:

Հանդիպմանը ներկա էին ոլորտը ներկայացնող մասնավոր անձիք, տուր-օպերատորների ասոցիացիայի նախագահ Կարինե Դավոյանը, զբոսավարների միության նախագահ Լիա Բախշիկյանը, Տուրիզմի ինստիտուտի ռեկտոր Ռ. Մինասյանը, տուրիստական կազմակերպությունների ղեկավարներ:

# Քննարկվել է «Հյուսիս-հարավ անաղբ Հայաստան» ծրագրին CNF-ի ներգրավման հարցը

ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական Արծրուն Պեպանյանը, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արմեն Վարդանյանը և ՀՀ բնապահպանության նախարարի հասարակական հիմունքներով խորհրդատու Գալուստ Նանյանը հանդիպել են CNF-ի Հայաստանի ազգային համակարգող Արման Վերմիշյանի և հիմնադրամի հաղորդակցության և հանրային իրազեկման գծով մասնագետ Ջոզեֆ Ալեքսանդր Սմիթի հետ:

Հանդիպմանը քննարկվել են իրականացվող բնապահպանական ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման գործընթացում համագործակցության հարցեր, նախանշվել այդ ուղղությամբ համատեղ գործողությունների մեխանիզմներ: Անդրադարձ է կատարվել բնության հատուկ պահպանվող տարածքներում CNF -ի կողմից իրականացվող միջոցառումներին, ապագա ծրագրերին: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել մի շարք հարցերի շուրջ,




մասնավորապես՝ «Հյուսիս-հարավ անաղբ Հայաստան» ծրագրին CNF-ի ներգրավման շուրջ: Հանդիպմանը կարևորվել է նաև բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ բնապահպանական թեմաներով գրող լրագրողներին լիարժեք տեղեկատվություն տրամադրելու հարցը և այդ նպատակով նրանց համար ԲՀՊՏ-ներ ճանաչողական այցերի կազմակերպումը:

# Նախատեսվում է ստեղծել Կիլիկիա նավի թանգարան

2017 թ.-ի փետրվարի 15-ին «ԱՅԱՍ» ծովային հետազոտությունների ակումբում տեղի է ունեցել քննարկում՝ «ԴԵՊԻ ԾՈՎ ԵԼՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻԵՆՆԱՅԻ 2014-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» ազգային ծրագրի շրջանակներում: Քննարկմանը մասնակցում էին ՀՀ բնապահպանության նախարարության «Երիտասարդական նախաձեռնության» անդամները:

Հանդիպման ընթացքում «ԱՅԱՍ» ծովային հետազոտությունների ակումբի ղեկավար Կարեն Բալայանի հետ քննարկվել են Հայաստանում առագաստանավային զբոսաշրջության զարգացման հեռանկարներն իբրև էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցի:

Կ. Բալայանը ներկայացրել է ակումբի, ինչպես նաև Կիլիկիա նավի ստեղծման պատմությունը: «Հայաստանը, որպես նավաշինության և նավագնացության հնագույն պատմություն և ավանդույթներ ունեցող երկիր, ուղղակի պարտավոր է զարգացնել տուրիզմի այս ճյուղը» -հավելել է Բալայանը: Ակումբի ղեկավարը նշել է, որ իրենց գործունեության հիմնական ուղղություններն են նավաշինության և նավագնացության պատմության ուսումնասիրումը, ստորջրյա հնագիտությունը, նավերի վերականգնումն ու փորձարկումը, ծովային առևտրական ուղիների, հին քարտեզների, նավաշինական գործիքների ուսումնասիրումը, նավարշավների կազմակերպումը: Բալայանը նշել է, որ իբրև հետազոտությունների տրամաբանական ամփոփում՝ կարևորում է Երևանում մշտական գործող Ծովային Թանգարան-ինստիտուտի հիմնադրումը:

Կիլիկիա առագաստանավը կարող է հանդիսանալ էկոտուրիզմի բաղադրիչ մաս և Սևանա լճում զբոսաշրջության զարգացման կարևոր հիմք և հետագայում դրա հիման վրա Երևանյան լճի ափին Կիլիկիա նավի թանգարան կառուցելու և էկոտուրիզմի մի նոր օջախ հանդիսանալ : Թե՛ նավի գործարկման ժամանակ, թե՛ թանգարանի տարբերակով այն կծառայի էկոկրթության, էկոդաստիարակության լավագույն խթան և կդառնա էկոտուրիզմի մի նոր միջոց:

Հանդիպման ավարտին պայմանավորվածություն է ձեռք բերվել հունիս ամսին հանդիպում-քննարկում կազմակերպել հենց Կիլիկիա առագաստանավի վրա:





# Լավագույն տեխնոլոգիայի կիրառումը ժամանակի հրամայական

Փետրվարի 10-ին «Առկա լավագույն տեխնոլոգիայի կամ բնապահպանական իմաստով լավագույն գործունեության մեթոդաբանության կիրառումը՝ բաց այրման աղբյուրներից կայուն օրգանական աղտոտիչների ոչ կանխամտածված արտանետումների նվազեցման համար» ծրագրի շրջանակներում կայացել է «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված սեմինար: Սեմինարին մասնակցել են շահագրգիռ գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից համատեղ՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ և նպատակաուղղված է դիօքսինների և ֆուրանների արտանետումների կրճատմանը՝ բաց այրման աղբյուրներից: Դիօքսինների վտանգը պայմանավորված է, ինչպես դրանց ֆիզիկաքիմիական հատկություններով (կայունություն շրջակա միջավայրում, ճարպերում՝ լավ, ջրում՝ վատ լուծելիություն, տարբեր էկոլոգիական համակարգերում կուտակվելու հատկությամբ), այնպես էլ չափազանց թունունակությամբ մարդու և կենսոլորտի այլ ներկայացուցիչների համար: Ի կատարումն 2003 թվականի Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի պարտավորությունների, կոնվենցիայի կողմ երկրները պետք է աջակցեն առկա լավագույն տեխնոլոգիայի կամ բնապահպանական իմաստով լավագույն գործունեության մեթոդաբանության կիրառմանը՝ բաց այրումը կանխարգելելու նպատակով: Թափոնների բաց այրումը աղբավայրերում կենցաղային աղբի վերացման ամենաէժան, հեշտ և համեմատած արագ եղանակ է, սակայն հանդիսանում է շրջակա միջավայրում դիօքսինների արտանետումների աղբյուր: Սեմինարի ընթացքում ներկայացվել են այն գործողությունները, որոնք իրականացվում են Հայաստանում և նպատակաուղղված են կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարմանը՝ տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Կոնվենցիայի ազգային համակարգող, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի պետ Անահիտ Ալեքսանդրյանը ներկայացրել է ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N49 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետությունում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի 2016-2020 թվականներին իրականացվելիք միջոցառումների ցանկը:

# «Էմերալդ ցանց» գրքի շնորհանդեսը




«Էմերալդ ցանց»-ն էկոլոգիական ցանց է, կազմված հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքներից, որոնք ունեն բուսական և կենդանական հազվագյուտ և անհետացող տեսակներ և դրանց բնական միջավայրը պահպանելու և վերականգնելու ներուժ:

ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալությունում փետրվարի 10-ին տեղի է ունեցել Հայաստանի կողմից վավերացված «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիայի շրջանակներում Եվրախորհրդի «Էմերալդ ցանց – բնապահպանական տարածքների պատրաստում, II փուլ» առաջին դրամաշնորհային ծրագրի ավարտական սեմինարը: Սեմինարին մասնակցում էին ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչներ, ԵՊՀ-ի և Ամերիկյան համալսարանի դասախոսներ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտաշխատողներ:

ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության բնության հատուկ պահպանվող տարածքների և դենդրոպարկերի կառավարման բաժնի պետ Ա. Աղասյանն իր խոսքում նշել է, որ ծրագիրը շատ կարևոր ռազմավարական նշանակություն ունի, որն իր մեջ ներառում է կենսաբազմազանության տեսանկյունից արժեքավոր այն տարածքները, որոնք դուրս են մնացել հատուկ պահպանվող տարածքների համակարգից: Այնուհետև ծրագրի համակարգող Գ. Ֆայվուշը ներկայացրել է ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքներն ու հետագա անելիքները: Սեմինարի ավարտին «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրենի տեղակալ Ս. Բալոյանը ներկայացրել է ՀՀ «Էմերալդ ցանցը» աշխատությունը, որն իրականացվել է ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և ծրագրի ազգային թիմի փորձագետների հետ համատեղ:

# Սեւանը սառցի տակ

Սևանա լճում ափասառույց ձեւավորվում է ամեն տարի, սակայն լիճը համատարած սառույցով ծածկվում է ոչ միշտ: Բաց լճի վրա սառույցը առաջանում է հունվարի երկրորդ կեսից մինչեւ փետրվարի 15-ը ընկած ժամանակահատվածում: Վերջին տարիներին լճի ջրի դարավոր պաշարների օգտագործման պատճառով առաջին սառցային երեւույթները 15-17 օր ավելի շուտ են սկսվում, քան այն ձեւավորվում էր լճի բնական մակարդակի ժամանակ: Երբ դեկտեմբեր-փետրվար ամիսների ընթացքում օդի միջին ջերմաստիճանը -5.6°C-ից ցածր է, իսկ փետրվարին առանց քամու եղանակի տեւողությունը կազմում է 100 ժամ եւ ավելի, ապա լճի վրա ձեւավորվում է համատարած սառցածածկույթ, որից լիճն ազատվում է մարտի վերջերին-ապրիլի սկզբին:



# Ֆոտոխցիկը նկարահանել է Եվա անունով ընձառյուծի ձագուկներից մեկին



WWF-Հայաստանի և Զանգեզուր կենսոլորտային համալիրի կողմից իրականացվող մոնիթորինգի արդյունքում ֆոտոխցիկը նկարահանել է Կովկասյան ընձառյուծին, որն ամենայն հավանականությամբ WWF-ի կողմից նախկինում նկարված Եվա անունով ընձառյուծի ձագուկներից մեկն է: Մեր երկրում սա առաջին դեպքն է, երբ ձագ է գրանցվում, որն ապացույց է այն մեծ աշխատանքի, որն իրականացվում է Հայաստանի հարավում ՀՀ բնապահպանության նախարարության, պահպանվող տարածքների անձնակազմի և միջազգային կառույցների ջանքերով:

## Նամակ բնապահպանության նախարարին





Բաց նամակ Հ.Հ. բնապահպանության նախարար Ա.Մինասյանին «Փրկենք Սևանը»։

Հարգելի պարոն նախարար, ես շատ եմ հպարտանում իմ դրախտ կոչվող երկրով՝ Հայաստանով։ Հատկապես առանձնացնելի է իմ չքնաղ երկրի զարմանահրաշ բնությունը։

Իմ հպարտությունն է Գեղամա ծովը՝ կապուտաչյա Սևանը, որտեղ եղել եմ ծնողներիս հետ։

Ճիշտ է, տարիքով փոքր եմ, բայց ամեն ինչ գիտակցում եմ, ինձ մտահոգում է Սևանա լճի փրկության հարցը։ Երբ ինձ համակարգչի մեջ հանդիպեցի «Փրկենք Սևանը» արշավախմբությանը, շատ հուզվեցի։ Մի՞թե Սևանա լիճը չենք կարող փրկել։ Այսօր աշխարհում սպառվում են քաղցրահամ ջրի պաշարները։ Եվ շատ շուտով խմելու ջուրը կդառնա ամենաթանկը։ Երբ ընթերցում էի նյութերը, թե ինչ էին այնտեղ գրել բնապահպանները, որ Սևանա լճի ջուրը մաքուր չի, ցածր է լճի մակարդակը, ոչնչանում է ձկնաշխարհը։



Եվ պատճառը լճափերին կառուցված շինարարությունների կոյուղաջրերն են, որ թափվում են լիճ։

Եվ միթե չկա նախարարություն, չի մտահոգում այս խնդիրները։ Ինչո՞ւ չեն ադմինիստրատորները ոչ մի քայլ չեն ձեռնարկում, չէ՞, որ Սևանա լիճը հպարտությունն է Հայաստանի։

Ես խնդրում եմ ձեզ պարոն նախարար, չէ՞, որ դուք գիտեք ու հայրենասեր եք, դուք ունեք իրավասություններ արգելելու, որ ամեն ինչ արվի Սևանա լճի փրկության համար։ Բայց մի մոռացեք, որ կապուտաչյա գեղեցկուհին սպասում է։

Եթե չկա Սևան, ուրեմն չկա նաև Հայաստան։

Շատ եմ խնդրում արագ լուծում գտնել այս խնդիրներին։ Չէ՞, որ Սևանա լիճը Հայաստանի անգին գանձերից է։

Գյումրու թիվ 7 դպրոցի
VI դաս.-ի աշակերտ
Արմինե Ղեխալարյան

Նախագիծը՝ **Արծրուն Պետանյանի**
Խմբագիր՝ **Մանվել Մկրտչյան**
Ձևավորումը՝ **Նարինե Բաղդասարյանի**
Նյութերը՝ **ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության**
Հեռախոս՝ **011 818 517**